

մը դրած է՝ բանտարկեալ քանի մը կաթողիկէ-  
ներն արձակել տալու համար: Այս դաշինքը,  
որուն օրինակն ունիմ, Աւետիքի կողմանէ ստո-  
րագրած են՝ Սարգիս Վ. որ կոչի Սահէթճի  
(Horologiarius), եւ Գր. Վ. Ուսայեցի: Է.  
Յակինթոս Քարուչինը՝ որ յառաջ կը բերէ զայս  
2 Հօկտ. 1702 թուակիր նամակին մէջ առ Բօն-  
չարգրէն Նախարար Լուդ. Ժ. Գ. ի, կը յիշէ նաեւ,  
որ Աւետիք Պատրիարք՝ Սարգիս Սահայթճին  
Սկիւտարի մէկ վանքին Առաջնորդ դրած է, եւ  
28 Գեկտ. 1702 նամակին մէջ կը յիշատակէ,  
թէ Սարգիս տակաւին նոյն պաշտօնին մէջ է:  
Այս վանքն անշուշտ Սկիւտարի Երուսաղեմայ  
վանքն է:

Գարձեալ Սարգիս 1704ին ի Կ. Պոլիս եր-  
րորդ գիրք մ'ալ տպագրած է՝

3. «Գիրք որ անուանեալ կոչի Լուսաշաւիղ,  
արարեալ եւ սահմանեալ Գալըստի վարդա-  
պետի Ամասեացոյ: Ի Հայրապետութեան Տեառն  
Նահապետի սրբազան Կաթողիկոսի սրբոյ Աթո-  
ռոյն Էջմիածնի: Եւ երկուց Սուրբ Աթոռոցն պե-  
տութեանցն սրբոյ Երուսաղեմի եւ Կ. Պոլսոյ  
Տեառն Մինասայ եւ Տեառն Գալըստի վերոյ  
գրեցելոյ: Ի թուականութեանս Հայոց

Թիւ արկանեմ ի քարտեզի  
Ութն մասանցն քերթողի,  
Յօդն արտաքսեայ Է. նիւ թուի,  
Եռակ Ժ. նիւ Ը. ըն աւարտի:

Եւ ի յամի Փրկչին ՌէճԳին: Եւ Հայոց ՌՃԾԳ